ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26.11.2020թ. **ք. Երևան**

Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման համար անցկացված որակավորման գրավոր քննության բողոքարկման հանձնաժողովը՝ մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ Ա. Մանուկյանի, հանձնաժողովի անդամներ Ն. Հովակիմյանի և Դ. Բալայանի (այսուհետ՝ Բողոքարկման հանձնաժողով), ուսումնասիրելով 2020թ. նոյեմբերի 3-ին կայացած՝ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված գրավոր քննության՝ «2849» ծածկագրով հանդես եկած մասնակցի կողմից որակավորման գրավոր քննության գնահատման հանձնաժողովի (այսուհետ՝ Գնահատման հանձնաժողով) հրապարակած քննության արդյունքի դեմ ներկայացված բողոքը, մասնակցի գրավոր քննության աշխատանքը և որակավորման գրավոր քննության հանձնաժողովի անդամների կողմից կազմված՝ որակավորման գրավոր քննության արդյունքի ստուգաթերթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

2020թ. նոյեմբերի 3-ին «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանդրական օրենքի 95-105-րդ հոդվածներով սահմանված հիմքերով ու կարգով ՀՀ Բարձրագույն դատական խորհրդում կայացել է գրավոր քննություն՝ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով:

Քննության արդյունքներով «2849» ծածկարգրով հանդես եկած մասնակցի աշխատանքը գրավոր առաջադրանքի 1-ին խնդրից ստացել է 22, իսկ 2-րդ խնդրից՝ 30 միավոր, ընդհանուրը՝ 52 միավոր:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանդրական օրենքի 101-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, քննության արդյունքների հրապարակումից հետո քննության՝ «2849» ծածկարգրով մասնակցի կողմից ներկայացվել է բողոք՝ քննության վերոհիշյալ արդյունքի դեմ:

ա. Քննության՝ «2849» ծածկագրով հանդես եկած մասնակիցը ներկայացրած բողոքով համարել է, որ թեև իրավիճակային 1-ին խնդրի 1-ին և 2-րդ հարցերի պատասխանները, այն է՝ անձանց արարքներին իր կողմից տրված քրեաիրավական որակումները սխալ են, սակայն այդ սխալները որպես բացարձակ սխալ գնահատելն ու այդ կապակցությամբ իր կողմից տրված պատասխանները 0 միավորով գնահատելն անհիմն է, քանի որ, սխալ քրեաիրավական որակումներ տալով, ինքն, այնուամենայնիվ, հանցագործության օբյեկտը որոշել է ճիշտ:

բ. Բացի այդ, համաձայն «2849» ծածկագրով հանդես եկած մասնակցի բողոքի, իրավիճակային 1-ին խնդրի 1-ին և 2-րդ հարցերին սխալ պատասխաններ տալը դեռևս չի կանխորոշում այն, որ այդ հարցերը վերլուծված չեն, կատարված չէ վերլուծությունից բխող համապատասխան եզրակացություն, և առկա չէ իրավաբանական գրավոր խոսքի հստակություն և տրամաբանական սահունություն, հետևաբար վերոհիշյալ չափանիշներով իր աշխատանքը հանձնաժողովի անդամների կողմից չէր կարող գնահատվել 0 միավորով:

գ. Բացի այդ, «2849» ծածկագրով հանդես եկած մասնակցի բողոքի համաձայն, իրավիճակային 1-ին խնդրի 1-ին և 2-րդ հարցերում իր կողմից անձանց արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության հարցին

չանդրադառնալը եղել է իրավաչափ, քանի որ անձանց արարքներում այդ հանցակազմի հատկանիշներն ակնհայտորեն բացակայել են:

դ. Անդրադառնալով գրավոր առաջադրանքի իրավիճակային 1-ին խնդրի 4-րդ հարցի պատասխանին՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքի բացակայության վերաբերյալ իր հետևությունը ճիշտ է, քանի որ իրավիճակային վերոհիշյալ խնդրում անձը հայտնել է միայն պատրաստակամություն՝ աջակցելու հանցագործության բացահայտմանը, մինչդեռ հիշյալ մեղմացնող հանգամանքի առկայությունը կարող է փաստվել, եթե անձն աջակցել է հանցագործության բացահայտմանը և ոչ թե պարզապես այդ կապակցությամբ հայտնել է պատրաստակամություն:

Անդրադառնալով գրավոր առաջադրանքի 2-րդ իրավիճակային խնդրին՝ բողոքաբերը նշել է, որ համաձայն է այդ խնդրի պատասխաններին Գնահատման հանձնաժողովի կողմից տրված գնահատականների հետ:

Ուսումնասիրելով 2020թ. նոյեմբերի 3-ին կայացած՝ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված գրավոր քննության՝ «2849» ծածկագրով հանդես եկած մասնակցի կողմից Գնահատման հանձնաժողովի հրապարակած քննության արդյունքի դեմ ներկայացված բողոքը, մասնակցի գրավոր քննության աշխատանքը և որակավորման գրավոր քննության հանձնաժողովի անդամների կողմից կազմված՝ որակավորման գրավոր քննության արդյունքի ստուգաթերթերը, Բողոքարկման հանձնաժողովը գտնում է, որ.

ա. Անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, որ իր կողմից անձանց արարքներին տրված սխալ քրեաիրավական որակումները որպես բացարձակ սխալ գնահատելն ու այդ կապակցությամբ իր կողմից տրված պատասխանները 0 միավորով գնահատելն անհիմն է, քանի որ, սխալ քրեաիրավական որակումներր տալով, ինքն, այնուամենայնիվ, հանցագործության օբյեկտը որոշել է ճիշտ, Բողոքարկման հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ իրավիճակային 1-ին խնդրում Վ. Սիմոնյանի կողմից կատարված հափշտակության կոնկրետ տեսակը բողոքաբերը որոշել է ճիշտ՝ սխալվելով միայն հանցագործության ավարտի հարցում, ինչպես նաև չվկայակոչելով Վ. Սիմոնյանի կատարած առաջին արարքը որակյալ դարձնող բոլոր հատկանիշները:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքարկման հանձնաժողովը գտնում է, որ իրավիճակային 1-ին խնդրում Վ. Սիմոնյանի կողմից կատարված հափշտակության կոնկրետ տեսակը ճիշտ որոշելու պայմաններում բողոքաբերի՝ մասնագիտացման ոլորտում իրավական գիտելիքները 0 միավորով գնահատվել չէին կարող:

Ինչ վերաբերում է իրավիճակային 1-ին խնդրում Դ. Ավագյանի արարքի քրեաիրավական որակմանը, ապա Բողոքարկման հանձնաժողովն արձանագրում է, որ այս կապակցությամբ բողոքաբերր եկել է ակնհայտ սխալ հետևության և ճիշտ չի որոշել Դ. Ավագյանի կողմից կատարված հափշտակության տեսակը, հետևաբար Բողոքարկման հանձնաժողովը հիմնավորված է համարում Դ. Ավագյանի արարքը որակելու ունակության կապակցությամբ բողոքաբերի ստացած 0 միավորը:

բ. ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի 2020թ. սեպտեմբերի 14-ի N ԲԴԽ-60-Ո-137 որոշման 1-ին հավելվածի 4-րդ կետը սահմանում է, որ հավակնորդի գիտելիքների ստուգումը ներառում է համապատասխան մասնագիտացման ոլորտում, վերլուծական և մեկնաբանման, հիմնավորված և պատճառաբանված եզրակացություններ կատարելու, իրավաբանական գրավոր խոսքը հստակ և տրամաբանված շարադրելու աշխատանքներում հավակնորդի ունակությունների ստուգումը:

Վերոգրյալից ուղղահորեն հետևում է, որ համապատասխան մասնագիտացման ոլորտում հավակնորդի ցուցաբերած գիտելիքներին տրված գնահատականը չի կարող կանխորոշել վերլուծական և մեկնաբանման, հիմնավորված և պատճառաբանված եզրակացություններ կատարելու, իրավաբանական գրավոր խոսքը հստակ և տրամաբանված

շարադրելու աշխատանքներում հավակնորդի աշխատանքին տրված գնահատականը, և նշված ոլորտներում հավակնորդի ունակությունները ենթակա են առաձին գնահատման:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքարկման հանձնաժողովն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն պնդմանը, որ իրավիճակային 1-ին խնդրի 1-ին և 2-րդ հարցերին սխալ պատասխաններ տալը, այն է՝ անձանց արարքները քրեաիրավական սխալ որակման արժանացնելը, դեռևս չի կանխորոշում այն, որ այդ սխալ որակումները վերլուծված չեն, կատարված չէ վերլուծությունից բխող համապատասխան եզրակացություն, և առկա չէ իրավաբանական գրավոր խոսքի հստակություն և տրամաբանական սահունություն, հետևաբար վերոհիշյալ չափանիշներով իր աշխատանքը հանձնաժողովի անդամների կողմից չէր կարող գնահատվել 0 միավորով:

գ. Բողոքարկման հանձնաժողովն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն պնդմանը, որ իրավիճակային 1-ին խնդրի 1-ին և 2-րդ հարցերում անձանց արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության հարցին իր կողմից չանդրադառնալը եղել է իրավաչափ, քանի որ անձանց արարքներում այդ հանցակազմի հատկանիշներն ակնհայտորեն բացակայել են:

դ. Անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքի բացակայության վերաբերյալ իր հետևությունը ճիշտ է, քանի որ իրավիճակային վերոհիշյալ խնդրում անձը հայտնել է միայն պատրաստակամություն՝ աջակցելու հանցագործության բացահայտմանը, մինչդեռ հիշյալ մեղմացնող հանգամանքի առկայությունը կարող է փաստվել, եթե անձն աջակցել է հանցագործության բացահայտմանը և ոչ թե պարզապես այդ կապակցությամբ հայտնել է պատրաստակամություն, Բողոքարկման հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ իրավիճակային 1-ին խնդրում կատարված այն նշումից, որ Խ. Սարգսյանը տվել է ինքնախոստովանական, ինչպես նաև հանցագործության կատարման մեջ Վ. Սիմոնյանին մերկացնող ցուցմունքներ, արդեն իսկ հետևում է, որ Խ. Սարգսյանն աջակցել է հանցագործության բացահայտմանը, հետևաբար նշված հանգամանքը պետք է բողոքաբերի կողմից գնահատվեր՝ որպես Խ. Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող:

Այլ խոսքով՝ նշված հարցի կապակցությամբ Գնահատման հանձնաժողովի կողմից բողոքաբերի աշխատանքին տրված գնահատականների հետ Բողոքարկման հանձնաժողովը հայտնում է համաձայնություն:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքարկման հանձնաժողովը գտնում է, որ «2849» ծածկագրով հանդես եկած մասնակցի բողոքը պետք է բավարարել մասնակի, մասնավորապես, անհրաժեշտ է մասնակիորեն փոփոխել իրավիճակային 1-ին խնդրի 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերի պատասխաններին Գնահատման հանձնաժողովի անդամների կողմից տրված հանրագումարային գնահատականներր, այն է՝ իրավիճակային 1-ին խնդրի 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերի պատասխանների վերստոգման արդյունքում Բողոքարկման հանձնաժողովի անդամների կողմից ստուգաթերթերում մասամբ փոփոխված գնահատականների հանրագումարները գումարել, որից հետո ստացված թիվը՝ 48-ը, բաժանել բողոքարման հանձնաժողովի անդամների թվի վրա՝ 3-ի՝ ստանալով 16 միջին գնահատականը:

Դրանից հետո հաշվարկել իրավիճակային 1-ին խնդրի 3-րդ և 5-րդ հարցերին Գնահատման հանձնաժողովի հանրագումարային գնահատականների միջին գնահատականը՝ ստանալով 15,8 (111/7), իսկ ամբողջացված տարբերակով՝ 16 միջին գնահատական, այնուհետև վերոհիշյալ՝ 16 միջին գնահատականին գումարել նշված՝ 16 միջին գնահատականը՝ ստանալով 32:

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա, արձանագրվում է, որ «2849» աշխատանքային ծածկագրով հանդես եկած մասնակցի բողոքը Բողոքարկման հանձնաժողովի կողմից մասնակիորեն բավարարելու արդյունքում իրավիճակային 1-ին խնդրից ստացված արդյունքն

ավելանում է 10 միավորով՝ կազմելով 32 միավոր՝ Գնահատման հանձնաժողովի կողմից արձանագրված 22 միավորի փոխարեն:

Վերջնաարդյունքում «2849» ծածկագրով հանդես եկած մասնակցի աշխատանքի արդյունքը գնահատվում է 62 միավոր (32+30):

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանդրական օրենքի 105.1. հոդվածի 4-րդ մասը, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի 2020թ. սեպտեմբերի 14-ի N ԲԴԽ-60-Ո-137 որոշման 4-րդ հավելվածի 32-րդ, 33-րդ և 34-րդ կետերը՝ Բողոքարկման հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

2020թ. նոյեմբերի 3-ին կայացած՝ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված գրավոր քննության՝ «2849» ծածկագրով հանդես եկած մասնակցի կողմից Գնահատման հանձնաժողովի հրապարակած քննության արդյունքների դեմ ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝ քննության արդյունքում իրավիճակային 1-ին խնդրից բողոքաբերի ստացած 22 միավորը ավելացնելով 10 միավորով, վերջնաարդյունքում փաստելով, որ «2849» ծածկագրով հանդես եկած մասնակցի կողմից որակավորման գրավոր քննության արդյունքում ստացած միավորների հանրագումարը 62-ն է:

Որակավորման գրավոր քննության
բողոքարկման հանձնաժողովի նախագահ՝ **Ա. Մանուկյան**

Որակավորման գրավոր քննության
բողոքարկման հանձնաժողովի անդամ՝ **Ն. Հովակիմյան**

Որակավորման գրավոր քննության
բողոքարկման հանձնաժողովի անդամ՝ **Դ. Բալայան**